04.07.2020թ. գրություն ուղղված

Ս-20/07/04-01

☑ ԻՎ ☑ ԳՏՏ ☑ Ի գիտություն
☑ ՀՀՎ ☑ ԾՎԿ ☑ Ի տնօրինություն
☑ ԱՄՎ ☑ Մեթոդ ☐ Պատասխանել
☑ ՏՏՎ ☑ Աուդիտ ☐ Ներկ. բանավոր
☑ ՀՍՎ ☑ Գանձապետ. ☐ Հրատապ
☑ ՄՌԿ ☑ Ռազմ. և պլան. ☐ _____
☑ մ/ճ բոլոր

Այլ _____ _____

ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի
Որոշում N 1/368Ա

03/07/2020

«ՖԱՍԹ ԿՐԵԴԻՏ ԿԱՊԻՏԱԼ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱԶԴԱԳԻՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն 2020 թվականի հունիսի 2-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ է ներկայացրել՝

- 400,000,000 ՀՀ դրամ ծավալով, 40,000 հատ, 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 36 ամիս շրջանառելիության ժամկետով, 10% տարեկան արժեկտրոնային եկամտաբերությամբ, արժեկտրոնի կիսամյակային վճարմամբ և
- 4,000,000 ԱՄՆ դոլար ծավալով, 40,000 հատ, 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 36 ամիս շրջանառելիության ժամկետով, 6.5% տարեկան արժեկտրոնային եկամտաբերությամբ, արժեկտրոնի կիսամյակային վճարմամբ

անվանական արժեկտրոնային պարտատոմսերի ազդագրի գրանցման հայտ, ինչպես նաև համապատասխան ազդագիրը և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով ազդագրի գրանցման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը:

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն հունիսի 23-ին ներկայացրել է նաև ազդագրի լրացում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացությունը (2020 թվականի հուլիսի 01-ի թիվ 29 արձանագրություն)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գրանցել «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից 2020 թվականի հունիսի 2-ին ներկայացված 400 մլն ՀՀ դրամ ծավալով՝ 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, 40,000 հատ, 10% տարեկան արժեկտրոնային եկամտաբերությամբ, արժեկտրոնի կիսամյակային վճարմամբ, 36 ամիս շրջանառելիության ժամկետով, և 4 մլն ԱՄՆ դոլար ծավալով՝ 100 (հարյուր) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 40,000 հատ,

6.5% տարեկան արժեկտրոնային եկամտաբերությամբ, 36 ամիս շրջանառելիության ժամկետով, արժեկտրոնի կիսամյակային վճարմամբ անվանական արժեկտրոնային պարտատոմսերի ազդագիրը:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ